ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 6710

« 22 » օգոստոսի 2024թ.

«ԻՄՔՐՈՒՎ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Գ. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Վաղարշապատ 1101, Մռավյան փ. 40Ա)

«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Մ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 16, բն.53)

Հարգելի՛ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների, բազկաթոռների և անվտանգության ապահովման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/23» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

«ԻՄՔՐՈՒՎ» ՍՊԸ

- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չեն 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ

- ներկայացված հայտում առկա փաստաթղթերը հաստատված չեն տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր),

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/23» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/23» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **օգոստոսի 23-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/23» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-777